# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4863-Ա «02» դեկտեմբերի 2025թ.

ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 59-րդ հոդվածով և 84-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով «Բագրատունյաց առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 11.11.2025թ. հ. 075-227 գրությունը, «Երևան ապրանքային բորսա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 07.11.2025թ. տրված հ.25/20 գնահատման հաշվետվությունը.

1.Երևանի ենթակայության «Բագրատունյաց առողջության կենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն)՝ Ընկերության հաշվեկշռում հաշվառված, սույն որոշման հավելվածում ընդգրկված գույքի օտարման մեկնարկային գինը սահմանել «Երևան ապրանքային բորսա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից գնահատված շուկայական արժեքները:

2.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետի և Ընկերության տնօրենի վրա:

3.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Ս. Մադաթյանի վրա:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված
Երևանի քաղաքապետի
02.12. 2025թ.
հ. ____4863____ -Ա որոշման

ՑԱՆԿ
«ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ» ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԳՈՒՅՔԻ

*ՀՀ դրամ*

| ՀՀ | Անվանում | Քանակ | Գնահատված արժեքները |
|---|---|---|---|
| 1 | «Актюбрнтген 5Д2» ռենտգեն ապարատ | 1 | 27,000 |
| 2 | «Актюбрнтген 12 Ф7» ֆլյուորո ապարատ | 1 | 98,000 |
| 3 | «Актюбрнтген 9Л5Ф» УХЛ 2 ռենտգեն ապարատ | 1 | 27,000 |
| 4 | LIANLONG LL5GF-4A գեներատոր | 1 | 70,000 |
| **Ընդամենը՝** | | **4** | **222,000** |

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝** **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**